

# ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

† Գլէք Ուսպենսկիի. — Գիւղացիների ազատութեան 41-դ տարեդարձը. — Քարձրագոյն հաստատուած առանձին խորհրդակցութիւն գիւղատնտեսական արդիւնաբերութեան կարիքների մասին. — Տնալնագործական համաժողովի առիթով. — Մասսայի բարօրութեան հիմնաքարերը. — Զինաստանից ստացուելիք տուգանքի վերածումը դրամի կամ նոր 40/0 փոխառութիւն։  
Դ. Աղալեան։

Պաշտօն ական հաղորդագրութիւններ. — Փոփոխութիւններ ներքին գործերի և լուսաւորութեան մինիստրութիւնների մէջ. — Կառաջն-ի լուրը Բագուից. — Անկարգութիւններ Պալտաւայի և Խարկովի նահանգներում։

Մարտի 24-ին, Պետերուրդից մօտ մի հիւանդանոցում, վախճանուեց ոուսաց յայտնի ժողովրդակեր-գրող Գլէք Ի վանօվիչ Ուսպենսկին, մօտ 62 տարեկան հասակում։

Ծանր հոգեկան հիւանդութեան պատճառով, հանգուցեալը զրկուել էր իր մտաւոր ընդունակութիւններից և մեռել զրականութեան համար գեռ մի քանի տարի առաջ։ Ոուսաց «Գրականական ֆօնդն» էր նիւթապէս խնամում այդ նշանաւոր հրապարակախօս-գեղարուեստագէտին։

Գլէք Ուսպենսկին այն տիպի զրոյներից էր, որոնք իրանց ամբողջ էութեամբ նուիրւում են մի սիրած զաղափարի ծառայութեան և այնքան ինքնուրոյն են, մտածմունքով անկախ, որ պատրաստի մտքեր ու շարլճնական թէօրիաներ չեն ընդունում, այլ ձգտում են իրանց լայն աշխարհայեցողութեամբ, իրանց ստեղծագործական կորովի ամբողջ թափով ըմբռնել հարցը իր արմատով։ Անհուն սիրելով ժողովրդի բարօրութեան դաղափարը, Գլէք Ուսպենսկին չէր ընդունում ժողովրդի ներկայ կացութիւնը իդէալականացնող մակերեւոյթային դատողութիւնները, այլ ուղղակի այրւում էր, իր ջղերի ամբողջ էնէրդիան լարում էր՝ խոր թափանցելու, հասկանալու համար ժողովրդը այնպէս, ինչպէս որ նա կայ Եւ գեռ ոչ ոք այնպէս ուժեղ և ծշպրիտ կերպով և այնպիսի ցնցող հումօրով չէր պատկերացրել ուսւ հասարակ ժողովրդի կացութիւնը և աշխարհայեցողութիւնը, ինչպէս այդ արաւ Գլէք Ուսպենսկին։

Գաւառական չքաւոր ծառայողի ընտանիքում ծնուած այդ տաղանդը գեռ իր մանկութեան և պատանեկութեան օրերում անձամբ փորձեց այն սոսկալի ճահճի առանձնայատկութիւնները, որի մէջ գանւում էր ոուս ժողովուրդը մնեց վերանորոգումներից առաջ: Իր անդրանիկ գրուածքում Ուսպենսկին դուրս բերաւ հէնց այդ ճահճից՝ «Բաստերեանավեան փողոցի բարքերը» պատմուածքներում: Այնքան տիպիկական և ուժեղ էին նկարագրուած պատկերները, որ այնուհեան ոուսաց զրականութեան մէջ «բաստերեանավեանա» խօսքը դառաւ մի հաւաքական անուն, հասարակական կենցաղի որոշ տիպը բնորոշող մի հասկացողութիւն:

Ինչպէս Շչեդրինը իր անխնայ զրչով նկարագրում էր բարձր դասակարգերի, խոշոր դիրքի մարդկանց ճահճայցած շրջանները, այնպէս և Ուսպենսկին առատ լոյս էր սփոռում մանր-մունք մարդկանց—արհեստաւորների, բանուորների, մեշչանների, աննշան աստիճանաւորների ապա և զիւղացիների—կենցաղը, որ զուրկ էր լոյսից և հոգին ու միտքը զարթեցնող գաղափարներից և մատնուած էր թշուառութեան, կամայականութեան ու բթացնող անշարժութեան: Այդ նեխուած ճահճը իրարանցման մէջ ընկաւ ճորտերի ազատութեան հոչակաւոր հրովարտակով: «Բաստերեանավեանա» սկսեց կամաց-կամաց կերպարանափոխուել. հին և նոր հասկացողութիւնները իրար խառնուեցին, ստեղծուեց անցողական գրութիւն իր նոր տիպերով: Պարզ չէր թէ ինչ զուրս կը գար ժողովրդական նոր կեանքիցը: Նա նկատում էր թէ «ԳՐԵԽՈՅՈԴՀԻԿԵ կապիտալ»-ի աղղեցութեան տակ անհետանում են ոուս զիւղացու մէջ նահապետական երկրագործութեան ստեղծած մի քանի լաւ զծերը: Նա տեսնում էր, որ արեւմտեան կապիտալի զմը զլիսաւրապէս իր մութ կողմերով է մուտք գործում ժողովրդի խաւերում և ոուսական իրականութիւնը զուրկ է անզամ այն հանգամանքներից, որոնք արեւմտեան Եւրոպայում մեղմացնում են «կուպօնի» գերիշխանութեան վեասակար արտայայտութիւնները:

Մինչև ուկրների ծուծը ժողովրդասէր, անսահման շիտակ ու բարի Գլէր Ուսպենսկին միանգամբ զուրկ էր չօվինիզմից: «Նամակներ Սերբիայից» իր գրուածքում նա խիստ քննադատում էր ոուսական յետամնացութիւնը և անշափահասութիւնը, համեմատած արեւմտաքի հետ: Իր ամբողջ էութեամբ ձգտելով ճշմարտութեան ակունքին, նա կանխակալ կարծիքներով չէր զեկագարուում, իր հոգեկան ամբողջ կարողութեամբ աշխատում էր ուսումնասիրել իրականութիւնը այնպէս, ինչպէս որ նա

կայ, առանց իդէալացնելու կամ ոսկեջրելու այլանդակութիւնները:

Դօրոգիւրօվի և Պետարեվի աշալուրջ բէալականութեամբ տոգորուած նա, բնականաբար, չէր կարող ընդունել «արուեստը արուեստի համար» սկզբունքը: Իրականութեան անմիջական տպաւրութեան տակ նա ստեղծագործում էր այնպէս, ինչպէս որ, առանց կեղծիքի ու հնարագիտութեան, թելադրում էր նրան իր լայն աշխարհայեցողութիւնը, շիտակ միտքը և ջերմ սէրը դէպի ժողովրդի իսկական բարօրութիւնը: Եւ իսկապէս նա ժամանակ էլ չունէր իր գրուածքները գեղարուեստօրէն կուկելու և շտկելու համար, բայց չը նայած գրան, նրա գեղարուեստական մեծ տաղանդը, այնուամենայնիւ, փայլում էր և նրա կցկոտը, շտապով գրուած պատմուածքներում:

Նրան աւելի հետաքրքրում էր ծշմարտութիւնը, երեւոյթի միտքը, քան գրելու ձեւը: Այդ է պատճառը, որ նրա պատմուածքները աւելի հրապարակախօսութիւններ են, քան բելլետրիստիկա: Գեղարուեստական տարրը, կարծես, միայն հեղինակի ասածները պարզաբանող վառ պատկերներ լինէին, լուսարանութիւններ: Այդքան լրջօրէն ու սրբութեամբ վերաբերուելով դէպի գրական խօսքը, այդքան գնահատելով ծշմարտութիւնը, նա, իրքն ժողովրդական կեանքը լաւ ուսումնասիրած հեղինակ, չէր կարող պատկանել այն «ժողովրդասէրների» տիպին, որոնք մի քանի ընդհանուր, տեսական գաղափարներից առաջնորդուելով, առանց ճանաչելու իրականութիւնը, սիրում են իդէալականացնել, չեղածը եղած ցոյց տալ, այլանդակը՝ գեղեցիկ: Աւսպենսկին աւելի նման էր այն բժշկին, որ ջերմ սիրելով հիւանդին, իր ամբողջ մտաւոր կարողութիւնը և ստեղծագործական տաղանդը գործ է գնում ուսումնասիրելու համար նրա ցաւերը, հիւանդութեան բուն պատճառները, որպէս զի բուժումը հիմնաւոր լինի:

Ուսպենսկու սուր դիտողութիւններից չը խուսափեց և ինտելիդէնցիայի մի մասի հոգու երկուորութեան, թափիծի սկզբնապատճառը: Հասարակ ժողովրդից դուրս եկած այդ ինտելիդէնտներից շատերը, կրթութեան չնորհիւ, հեշտութեամբ կարողանում էին լաւ պաշտօններ գտնել: Ճառայելով զանազան հիմնարկութիւններում նրանք միաժամանակ զգում էին որ իսկապէս չեն հաւատում այդ հիմնարկութիւնների մէջ իրանց գործունէութեան օգտակարութեան և նպատակայարմարութեան, այլ մի կտոր հաց ճարելու համար զոհում են իրանց զարգացումը, ոյժերը, որոնց կարելի էր աւելի լաւ զործադրութիւն տալ: Այստեղից ծագում է ինտելիդէնցիայի «հիւանդ խիլճը» կամ

անգոհութիւնը իրանից, Բայց շատ քիչերը կամք են ունենում լսել այդ «հիւանդ խղճի» թելադրութեան և մտնել ժողովրդի մէջ, ձուլուել նրա հետ, ապրել նրա կեանքով, զործել նրա համար. Այդ սակաւներից էլ շատերը այնքան քիչ են ճանաչում ուսւ գիւղացուն, այնքան անգործնական են, որ յաճախ ծիծաղելի են դառնում դրանց աչքում և հարստահարում իդէալականացրուած գիւղացիներից. Տես, օրինակ, նրա «Կուդաք-բարին», «Օվճա եօչ տաճ» պատմուածքները: Գիւղացու նահապետական երկրագործական կեանքը ամբողջապէս արդիւնք էր նրա յարմարուելուն բնութեան պահանջներին («Վալայ ՅԵՄԼԻ»): Ճորտերի ազատութիւնից յետոյ կապիտալիզմը մուտք է գործում ուսւական կեսանքի բոլոր խաւերում, հարուստների և աղքատների է բաժանում և գիւղական երկրագործ դասակարգը, լայնացնում վիճը չքաւորի և հարստի, ճնշողի և ճնշուածի մէջ. Այդ փոփոխութիւններն էր նկարագրում Ուսւակենակին:

Իր շուրջը կատարուող կեանքի երեւոյթների սառնարիւն դիտող չէր Գլէր Ուսպենսկին, նա իրան տուած աստուածային կայծը բորբոքում էր գարձնում մի բոցավառ խարոյի, որ լափում էր նրա զղային ահազին էներգիան: Եւ տեսդային, չափանց լարուած աշխատութիւնը վերջ ի վերջոյ սպասեց նրա ամբողջ մտաւոր կորովը, հոգեկան ոյժերը...

Հետաքրքրական է թէ ինչ կ'ասէր Ուսպենսկին, եթէ նա իմանար թէ ինչ է կատարուում նրա շուրջը վերջին տարիներս, եթէ տեսնէր թէ ինչպէս կերպարանափոխուած «ըրաստերեանեվշչինան» ինքը, իր սեփական նախածեռնութեամբ, փերառուարի 19-ին, առաջին անգամ հանդիսաւոր կերպով, տօնեց մեծ բեֆորմների 41-րդ տարեդարձը Մոսկուայի Կրեմլի մէջ, իշխանութեան թոյլատութեամբ աշխատող դասակարգի ահազին ամբոխը ինքը իր ձեռքով պսակեց Ազատարար կայսրի արձանը, դրանով յայտնելով թէ իր անկեղծ երախտագիտութիւնը և թէ հասունութիւնը...

Քաղաքների աշխատող դասակարգի մէջ այդպիսով նը-կատելի է մաքի որոշ օթափում, մինչդեռ գիւղը օրէցօր աղքատանում է, ընկնում, նրա անտեսականը տարէց տարի քայլայւում է: Փայլուն դրութեան մէջ չէ առհասարակ և խոշոր գիւղատնտեսական արդիւնաբերութեան վիճակը: Եւ ահա «գիւղատնտեսական արդիւնաբերութեան կարիքները ցոյց տալու և այդ արդիւնաբերութեան և նրա հետ կապուած ժողովրդական աշխատանքի ճիւղերը բարձրացնելու միջոցներ գըտնելու համար» Բարձրագոյն հաստատուած է, գինանաների միմինիստրի նախագահութեամբ, առանձին խորհրդակցութիւն,

որ իր պարապմունքները սկսեց Պետերբուրգում դեռ վետրուարի 2-ին։ Գործին հմուտ մարդիկ ցանկութիւն են յայտնում որ այդ խորհրդածութիւններին հրավրուեն և նահանդակական զեմստվուներից ընտրուած ներկայացուցիչներն են իսկ այստեղ, ուր չը կայ զեմստվօ, օրինակ, Կովկասում, ի հարկէ, ցանկալի է, որ այդ խորհրդակցութեան մասնակցելու համար Գիւղատնաեսական ընկերութիւնները իրանք ընտրէին երկրագործ մասսայի դրութեանը լւա ծանօթ անձանց...

Պետերբուրգում վերջերս տեղի ունեցաւ նաև տնայնագործական գործիչների Ա. համաժողովը, որ բացայաց կերպով ապացուցեց թէ և տնայնագործական զարգացումն ու արդասաւորութիւնը կախուած է ժողովրդի լուսաւորութեան չափից և տեղական ինքնավարութիւնների կողմից հասարակ տնայնագործներին ցոյց տուած աջակցութիւնից։ Տնայնագործական ցուցահանդէսում պարզ երեւում էր, որ իրերի արժանաւորութիւնը ուղղիղ յարաբերական են որոշ գաւառների մէջ եղած լուսաւորութեան մակերեւոյթին և ինքնավարական չափերին։ Հասկանալիք է թէ ինչու առաջին տեղը բռնում էին ֆինլանդական իրերը, ապա այն զեմստվօնների գործուածները, ուր տեղական ինքնավարութիւնը առանձին ուշադրութիւն է զարձրել տնայնագործութեան վրայ։ Մեզնից շատ և շատ աւելի զարդացած խոշոր արդիւնագործական երկրներում, անայնագործական որոշ ճիւղեր դեռ ևս շարունակում են մրցել և իրանց դիրքը պահպանել գոյութեան կուում։ Մեր երկրում դեռ աւելի շատ են տնայնագործական կենսունակ ճիւղերը, միայն հարկաւոր է արևնայնագործների մտքի և ճաշակի զարդացում, որպէս զի նրանց պատրաստած իրերը շուկայում կարողանան գոհացնել սպառողներին...

Յայտնի է որ ֆինանսների ներկայ մինիստրի ջանքերով Ռուսաստանի արդիւնագործութիւնը տարէցարի խոշոր ծաւալ է ստանում, կապիտալիզմը խոր արմատներ է զցում երկրի մէջ, մինոյն ժամանակ ֆինանսների մինիստրը, առանձին ուշադրութիւն է զարձնում տեխնիկական և առևտրական դպրոցների թիւը բարձրացնելու, երկիրը երկաթուղային խիտ ցանցով ծածկելու մասին։ Այդ վերջին նպատակին է ծառայելու և Զինաստանից ստացուելիք տուգանքի՝ այժմ և թէ գրամի վերածումը, փոխառութեան միջնորդով։ իրան հասանելիք ամբողջ տուգանքը, 181,959,000 ռուբլին մաս-մաս և երկար տարիների ընթացքում ստանալու փոխարէն, Ռուսաստանը 4<sup>0</sup>/0 փոխառութեամբ միանգամից կը ստանայ այդ գումարը գլխաւորապէս Գերմանիայից։ Դրա մի մասով պէտք է գոհացում տրուի պատերազմի

պատճառով վեասուած մամնաւոր անձանց և մամնաւոր հիս-  
նարկութիւններին, իսկ մուացածը յատկացնուելու է իրրե նպաստ  
մամնաւոր երկաթուղային ընկերութիւններին:

ՄԵՆՔ ստացանք համակրողների մի խմբից ծանուցում, որ  
նա մտադիր է այս տարուայ գարնանը, Մայիսի 10-ին, ընտա-  
նելիան կերպով տօնել Ղազարոս Աղայեանի գրական գործունէու-  
թեան քառասնամեակը:

Ղազարոս Աղայեանը մեր գիւղական մթնոլուաից դուրս եկած  
մի ինքնուրոյն տաղանդ է, իր կամքի ուժով և բնածիր փայլուն  
ընդունակութիւններով նա ձգտեց՝ ինքնակրթութեամբ բարձրա-  
նալ իրան ծնող ժողովրդի մտաւոր մակերեսոյթից. բայց հաս-  
նելով իր նպատակին, նա չը մոռացաւ այդ ժողովուրդը և ամ-  
բողջապէս իրան նուիրեց նրա լուսաւորութեան գործին:

Ժողովրդական լեզուի համն ու հոտը պահպանելով, նա իր  
գրական ստեղծագործութիւնների մէջ ձգտեց տալ իր ազգի  
մատաղ սերնջին ազնիւ քաջասրութեան և հոգու արիութեան  
դասեր: Իրրե պատանեկական հասակի բանաստեղծ-գրող նա  
չունեցաւ իր նման ուրիշը մեր գրականութեան մէջ: Նրա բա-  
նաստեղծական տաղանդը երեսում է նոյն իսկ նրա թարգմանու-  
թիւնների մէջ, որովհետև ոչ-բանաստեղծը չէր կարող այնպի-  
սի հրաշալի լեզուով թարգմանել, օրինակ, «Ոսկէ  
Զկնիկը», ինչպէս այդ կատարել է Ղ. Աղայեանը:

Իրրե մանկավարժ Ղ. Աղայեանը ցոյց տուեց իր ինքնու-  
րոյն թարմ մտածողութիւնը: Առողջ միտքը և բնածին տաղանդը  
նրան տալիս էին շատ աւելի, քան ինչ ունեն մեր մի քանի զիալ-  
լօմաւոր «մանկավարժները», իրանց չը մարսած գերմանական  
«սիստեմներով»: Աղայեանի կազմած դասագրքերը, նրա բազմա-  
թիւ յօդուածները «Աղբիւրում», որ մի ժամանակ դուրս էր գա-  
լիս de facto նրա խմբագրութեամբ, և նրա գործունէութիւնը  
ուսուցչական ասպարէզում՝ չեն կարող մոռացուել պարտաճա-  
նաչ հասարակութիւնից:

Իր երիտասարդութեան և առնակում Ղ. Աղայեա-  
նը իր ոյժերը ամբողջապէս նուիրեց իր ազդին, երբէք չը մտա-  
ծելով իր անձնական ապահովութեան մասին, իր ընտանիքի  
ապագայի մասին: Նա աշխատեց հասարակութեան համար,  
այժմ՝ հասարակութեան պարագն է վարձարել նրան, ցոյց տալ  
իր երախտագիտութիւնը:

Ի սրտէ ցանկանք, որ մեր ալեզարդ գրող-մանկավարժը  
և հասարակական գործիչը ըստ արժանւոյն դնահատուի հայ հա-

սարակութիւնից, որ վայելել է և գեռ երկար ժամանակ կը վայելի նրա բազմակողմանի գործունէութեան արդասիքները.

## ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Правительственныи Вѣстникъ» լրագրում տպուած է. Այն անձանց մեծամասնութիւնը, որոնք յանցաւար էին փետրուարի 9-ին և 17-ին անկարգութիւններ նախապատրաստելու և մասնակցելու մէջ, Բարձրագոյն հրամանով բանտարկութեան ենթարկուեցին, և այդ բանի համար նշանակուած էր Արխանգելսկի բանարք. Մինչև Արխանգելսկ ուղարկելը բոնուածները մնում են Մոսկուայի բանտերից մէկում, և նրանց ընթացքը, որ արտայայտուած է նրանով, որ նրանք անկարգութիւններ են անում, չեն ենթարկուած բանտարքին կանոններին և կարգապահութիւնը խախտում են, այն եղակացութեան է բերում, որ համեմատաբար երկար ժամանակով այդքան անձանց կուտակումը մէկ բանտում կարող է չափազանց ոչ ցանկալի հետևանքներ ունենալ, որոնք, նոյնպէս, կարող են անհրաժեշտ դարձնել արտակարգ միջոցներին դիմելը: Թէ այդ պատճառով և թէ պահպանելու համար ընկերների հնարաւոր վատ ազդեցութիւնից առանձին կալանաւորներին և առնասարակ բանտարքին կարգը, թագաւոր Կայսրը բարեհածեց հրամայել, որ նախկին ենթադրութիւնը՝ բանտարկութեան դատապարտուած վերոյիշեալ անձանց Արխանգելսկի բանտում կինտրոնացնելու մասին փոխել և բաժան-բաժան տեղաւորել նրանց, պատիքը կրելու համար, փոքրաթիւ խմբերով Կայսրութեան զանազան բանտերում:

Ապրիլի 2-ին, ցերեկուայ մօա 2 ժամին, երբ ներքին գործերի մինիստրը մտնում էր մինիստրների կօմիտէտի շինութիւնը Մարիինսկի Պալատում, դրանից մի քանի բոպէ առաջ կառքով եկած և դոնապանի սենեկում մինիստրին սպասող անյայտ մարզը, զինուորական օֆիցէրական համազգեստով, մատուցանելով կնքած ծրար, չորս անգամ բէզօլվէր արձակեց մինիստրի վրայ, այնպէս որ երկու գնդակով ծանր վիրաւորեց եղերմէյստէր Սիպեագինին: Վիրաւորուածին, Մաքսիմիլիանովսկայա բուժաբանը տեղափոխելուց յետոյ, բժշկական օգնութիւն հասցրին բժշկապետներ Վելեմինով և Տրօյանով, բայց չը նայելով դրան, եգերմէյստէր Սիպեագին մէկ ժամից յետոյ վախճանուեց: Ստուգուած է, որ բոնուած յանցաւորը, զինուորական չը լի-